Ի՞նչ է տեղի ունենում ստուգման ժամանակ

Ձեր սպասարկողը՝

- ֆիզիկական քննություն կկատարի.
- կստուգի Ձեր աճը և զարգացումը.
- կհարցնի Ձեր ընտանիքի առողջության պատմության մասին.
- անհրաժեշտության դեպքում՝ հանձնարարված պատվաստումները կկատարի.
- կխոսի ատամների առողջության մասին և երբ անհրաժեշտ լինի՝ Ձեզ ֆտորային պատրաստուկներ կտա ու կօգնի ատամնաբույժ գտնել.
- կստուգի Ձեր լսողությունը և տեսողությունը.
- կհարցնի Ձեր հոգեկան առողջության և զգայական ինքնազգացողության մասին ինչպես նաև՝ ալկոհոլ կամ թմրանյութեր օգտագործելու մասին՝ պարզելու համար, թե արդյոք Ձեզ անհրաժեշտ են համապատասխան ռեսուրսներ կամ աջակցություն.
- կքննարկի Ձեզ հետ առողջության վերաբերյալ կարևոր հարցեր, օրինակ՝ սեռական առողջությունը, սնունդը, ապահովությունը և մաշկն արևից պաշտպանելը:

Բացի այդ, Ձեր սպասարկողը կստուգի՝

- **ընկճախտի, անհանգստության կամ ինքնասպանության վտանգը.**
- **տուբերկուլյոզը (TB)**՝ արդյոք վտանգ կա.
- **խոլեստերինը**՝ արդյոք վտանգ կա.
- **սակավարյունությունը (անեմիան)**՝ արդյոք վտանգ կա.
- **սեռավարակները (STI-ներ)**՝ արդյոք վտանգ կա.
- **Ձեր ունեցած այլ առողջական խնդիրները** կամ մտահոգությունները:

Armenian 2025: For teens and young adults age 12 to 21

Եթե հարցեր ունեք կամ ցանկանում եք ավելին իմանալ

«Medi-Cal»-ի Ձեր կառավարվող բուժսպասարկման ծրագիրը
Հեռախոսի համարը կգտնեք Ձեր ծրագրի ID քարտի վրա և ծրագրի կայում Կամ այցելեք www.dhcs.ca.gov/mmchpd

«Medi-Cal»-ի անդամների օգնության հեռախոսագիծը
Զանգահարեք **1-800-541-5555** (TDD 1-800-430-7077)
Կամ այցելեք www.dhcs.ca.gov/myMedi-Cal

«Medi-Cal»-ի Ատամնաբուժական ծրագիրը
Զանգահարեք «Smile, California»՝ **1-800-322-6384** (TTY 1-800-735-2922) հեռախոսահամարով
Կամ այցելեք smilecalifornia.org կամ www.dhcs.ca.gov/MCP

Մասնագիտացված հոգեկան առողջությունը
Զանգահարեք **1-888-452-8609**
Լուրջ հոգեկան խնդրի դեպքում տրամադրվող ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար կապվեք Ձեր շրջանի Հոգեկան առողջության ծրագրի հետ՝ այցելելով www.dhcs.ca.gov/CMHP

Ալկոհոլի և թմրանյութերի օգտագործումը
Զանգահարեք Առողջապահության ծառայությունների դեպարտամենտի (DHCS) Թմրանյութերի և ալկոհոլի օգտագործման ռեսուրսների կենտրոն՝ օրը 24 ժամ/շաբաթը 7 օր՝ **1-800-879-2772** հեռախոսահամարով
Կամ այցելեք www.dhcs.ca.gov/SUD-NETRL

Ճգնաժամային աջակցություն
Զանգահարեք «Ինքնասպանության և ճգնաժամի կենսագծին»՝ **988** համարով

Խորհրդատվություն հոգեկան առողջության հարցերով/հրահանգավորում
Զանգահարեք կամ կարճ հաղորդագրություն ուղարկեք **1-833-317-HOPE** (4673) համարով կամ այցելեք www.calhope.org

Իմացեք Ձեր իրավունքները և պարտականությունները
Զանգահարեք **1-888-452-8609**

DHCS
www.dhcs.ca.gov/kidsandteens

Medi-Cal for Kids & Teens

Կանխարգելիչ և բուժական ծառայություններ պատանիների և մինչև 21 տարեկան երիտասարդների համար

«Medi-Cal»-ը ծառայություններ է տրամադրում պատանիների և մինչև 21 տարեկան երիտասարդների համար

Եթե Դուք մինչև 21 տարեկան եք և «Medi-Cal»-ի անդամ եք, Դուք կարող եք ստանալ այն ստուգումները, ծառայություններն ու աջակցությունը, որոնք անհրաժեշտ են Ձեր առողջությունը պահպանելու կամ վերականգնելու համար:

Անգամ եթե Դուք հիվանդ չեք, կարևոր է տարին մեկ անգամ ստուգում անցնել, որպեսզի առողջ լինեք: Այդ ստուգումները կարող են կանխել առողջական խնդիրները՝ դրանք վաղ հայտնաբերելով և բուժելով:

Եթե անգամ Դուք հենց նոր եք ստուգում անցել, առողջական խնդիր ունենալու դեպքում՝ ցանկացած ժամանակ կարող եք ժամադրություն ստանալ Ձեր բժշկի մոտ:

Հարկավոր է նաև 6 ամիսը մեկ ատամնաբույժին այցելել, որպեսզի առողջ ատամներ ունենաք:

Ծրագրեք Ձեր ստուգումները

Զանգահարեք Ձեր կառավարվող բուժսպասարկման ծրագիր: Կամ զանգահարեք «Medi-Cal»-ի Անդամների օգնության հեռախոսագծին՝ **1-800-541-5555** (TDD 1-800-430-7077) համարով: Ձեզ կօգնեն՝

- **բժիշկ գտնել** կամ ժամադրություն ստանալ.
- **օգտվել անվճար փոխադրամիջոցից**՝ Ձեզ նշանակված ժամադրություններին ներկայանալու կամ դեղեր, բժշկական սարքավորումներ և պարագաներ վերցնելու ու տուն վերադառնալու համար.
- **լեզվի հարցում օգնություն ստանալ** Ձեր այցելության ժամանակ.
- **թարգմանական ծառայություններ ստանալ:**

Եթե այս թերթիկը կամ «Medi-Cal»-ի որևէ այլ նյութ Ձեզ անհրաժեշտ է **այլընտրանքային ձևաչափով**, օրինակ՝ խոշորատառ, ձայնագրված, CD-ով կամ Բրայլի գրատիպով, զանգահարեք **1-833-284-0040**:

«Medi-Cal»-ի ծառայություններն անվճար են պատանիների և մինչև 21 տարեկան երիտասարդների մեծ մասին համար

Ձեզ անհրաժեշտ ողջ բուժօգնությունն անվճար է, բացառությամբ այն դեպքի, երբ «Medi-Cal»-ի իրավունակություն ստանալիս Դուք «Ծախսերի բաժին» եք ունեցել: Բուժօգնությունը ներառում է ստուգումները, պատվաստումները, առողջության ընդհանուր քննությունները և ֆիզիկական, հոգեկան, սեռական և ատամների հետ կապված առողջական խնդիրների բուժումը:

Սեռական առողջության ծառայությունների մեջ կարող են մտնել՝

- ընտանիքի պլանավորումը, խորհրդատվությունը և իրազեկումը.
- հակաբեղմնավորումը և շտապ հակաբեղմնավորման դեղերը.
- հղիության արհեստական դադարեցման ծառայությունները.
- սեռավարակների ստուգումը և բուժումը.
- ՄԻԱՎ-ի (HIV) ստուգումը.
- գենդերային ինքնության հաստատման ծառայությունը:

արքաբուժական ծառայությունների մեջ կարող են մտնել՝

- անհատական, խմբային և ընտանեկան թերապիան.
- ճգնաժամային խորհրդատվությունը.
- գործի կառավարումը.
- դեղերը հոգեկան առողջության հետ կապված խնդիրների համար.
- ընկճախտի և անհանգստության ստուգումը.
- թմրանյութային և ալկոհոլային կախվածության բուժման ծառայությունները:

«Մանկապատանեկան Medi-Cal»-ը վճարում է առողջական խնդիրները կառավարելու և բուժելու ծառայությունների համար

Եթե բժիշկն այնպիսի մի ֆիզիկական, հոգեկան, սեռական կամ ատամների հետ կապված խնդիր է հայտնաբերում, որը բուժելու կամ կառավարելու անհրաժեշտություն կա, ապա «Medi-Cal»-ը պետք է տրամադրի անհրաժեշտ բուժօգնությունը և վճարի դրա համար:

«Մանկապատանեկան Medi-Cal»-ի կողմից տրամադրվող բուժօգնությունը

- ֆիզիկական առողջության ծառայություններ, այդ թվում՝ նախնական բուժօգնություն և այցելություն մասնագետներին
- հոգեկան առողջության և թմրանյութերից կամ ալկոհոլից կախվածության ծառայություններ, այդ թվում՝ բուժում
- ատամնաբուժական ստուգումներ և վերահսկողություն
- ակնաբուժական ծառայություններ, այդ թվում՝ ակնոց
- լսողության բժշկական ծառայություններ
- COVID-19-ի ստուգում և բուժում
- բժշկական սարքավորումներ և պարագաներ, այդ թվում՝ երկարատև օգտագործման բժշկական սարքավորումներ
- դեղեր
- լաբորատոր հետազոտություններ, այդ թվում՝ սեռավարակների ստուգում և անհրաժեշտ հսկողություն
- սեռական և վերարտադրողական առողջապահական ծառայություններ
- ֆիզիոթերապիա, աշխատաբուժություն և խոսքաբուժություն
- հղիության ստուգումներ
- տնային առողջապահական ծառայություններ, այդ թվում բուժքույրական օգնություն
- հիվանդանոցային և ստացիոնար բուժում
- բոլոր այլ ծառայությունները, որոնք Ձեր սպասարկողն անհրաժեշտ կհամարի